ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ
ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ԵՐԵՎԱՆԻ ՋԷԿ» ՓԲԸ

ՀՀ, ք. Երևան 0053, Արին-Բերդի փ. 3-րդ նրբ., 3

www.ytpc.am +374 11 472 760 | +374 11 472 771 mailbox@ytpc.am

MINISTRY OF TERRITORIAL ADMINISTRATION
AND INFRASTRUCTURES OF RA

"YEREVAN TPC" CJSC

RA, 0053 Yerevan, Arin-Berdi st. 3rd Lane, 3

N° Ձ/119-2024

02 02 2024թ./y.

ՈՐՈՇՈՒՄ

«ԱՊԱՎԵՆ» ՍՊԸ-Ը ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով և «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի պահանջներով՝

Պ Ա Ր Զ Վ Ե Ց

Գործի նախապատմությունը.

«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Պատվիրատու) կարիքների համար 2023թ. նոյեմբերի 3-ին բեռնափոխադրման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԵՋԷԿ-ԷԱՃԾՁԲ-23/61» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ գնման ընթացակարգ (այսուհետ՝ Ընթացակարգ)՝ 1 (մեկ) չափաբաժնով, որն իրականացվել է auction համակարգի (այսուհետ՝ Համակարգ) միջոցով:

Ընթացակարգի արդյունքում հաղթող ճանաչվեց <<Ապավեն>> ՍՊԸ, որի հետ 29.11.2023թ. կնքվեց պայմանագիր: Սակայն 09.01.2024թ. <<Ապավեն>> ՍՊԸ-ը գրությունով հրաժարվեց պայմանագրի կատարումից: Հիմք ընդունելով պայմանագրի 2.1.3. կետը Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն ՓԲԸ 10.01.2024թ. միակողմանի լուծել է ԵՋԷԿ-ԷԱՃԾՁԲ-23/61 պայմանագիրը:

Գործի քննության իրավական հիմքերը.

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների

ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը, որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ նշված ցուցակը, այդ թվում՝ ռուսերեն, վարում և հրապարակում է լիազորված մարմինը: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա:

Հիմք ընդունելով վերոնշյալ իրավական և փաստական հանգամանքները և ղեկավարվելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով՝

Որոշում եմ

1. <<Ապավեն>> ՍՊԸ-ը ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում 2 (երկու) տարի ժամկետով:
2. Որոշումը տրամադրվում է լիազորված մարմնին (ՀՀ ֆինանսների նախարարությանը)՝ Մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար և մեկ օրինակ տրամադրում է <<Ապավեն>> ՍՊԸ-ին:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված ժամկետում և կարող է բողոքարկվել դատական կարգով:

«ԵՐԵՎԱՆԻ ՁԷԿ» ՓԲԸ-ի
Գլխավոր տնօրենի պ/կ՝ **Ա. Բաղդասարյան**